ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 579 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 430-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխ-վարչապետի 2023 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համայնքների զարգացում» ծրագրի մասին» N 430-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 22583941 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ ամսական 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2020 թվականի հուլիսի 16-ին կնքված՝ N 21435204 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023

թվականի օգոստոսի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում մոբայլ ինտերնետ ծառայությունների մատուցում՝ ամսական 10,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2020 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N Վ-17/01/2020 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում տպագրական ծառայությունների մատուցում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2018 թվականին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 12,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

5) «Սիուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00901201) 2023 թվականի հուլիսի 26-ին կնքված՝ N 047/2023 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական թեստերի ձեռքբերում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ